ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսառատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսառատ, (0234) 6-11-20, (0234) 6-11-30; lusarat@bk.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 14-Ն

<<ԼՈՒՍԱՌԱՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ >> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ <<ԼՈՒՍԱՌԱՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 63-րդ հոդվածի 1-ին մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ մասի և <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

14-Ն

1. << Լուսառատի բժշկական ամբուլատորիա>> փակ բաժնետիրական ընկերությունը /այսուհետ ՓԲԸ/ վերակազմավորման ձևով վերակազմակերպել << Լուսառատի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության / այսուհետ՝ ՀՈԱԿ/:
2. Համայնքի ղեկավարին՝
ա/ մեկամսյա ժամկետում կազմել և հաստատել ՓԲԸ վերակազմավորման կարգը և պայմանները , տեղաբաշխված բաժնետոմսերի և այլ արժեթղթերի փոխարկման կարգը.
բ/ հաստատել ՓԲԸ գույքի և գույքային իրավունքների՝ ՀՈԱԿ-ին փոխանցման ակտը, որում առկա են վերակազմակերպվող ընկերության գույքի և պարտատերերին ու պարտապաններին վերաբերող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին դրույթներ.
գ/ կայացնել ՀՈԱԿ-ի ստեղծման մասին որոշումը, կազմել կազմակերպության կանոնադրության նախագիծը և ներկայացնել ավագանու հաստատմանը.
դ/ կազմել համայնքային կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմը և ներկայացնել ավագանու հաստատմանը:
3. Հավանություն տալ համայնքի ղեկավարի ներկայացրած՝ << Լուսառատի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակելու համար Էլմիրա Ղարիբի Մարտիրոսյանի թեկնածությանը:

4. Կազմակերպության կառավարման, ինչպես նաև՝ << Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի <<է>> ենթակետով ու 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Լուսառատ համայնքի ղեկավարին:
5. ՓԲԸ տնօրենին. ընկերության բոլոր պարտատերերին օրենքով սահմանված կարգով ծանուցել ընկերության վերակազմավորման մասին:
6. ՈՒԺը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 25.07.2014 թ. N 13-Ն որոշումը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԱՍՊԱՐ
2. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԵՎՈՐԳ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՔԵՇԻՇՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՆԻԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ